




ՌՈՒՄԵՆ ԵԿԵՂԵՑԻՒ ՊԵՏ Ն. ԱՄԵՆ. ԺՈՒՍՏԻՆԻԱՆ

ՊԱՏՐԻԱՐԷ ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ

Սուրբ Երկրի դարաւոր և հարուստ պատմութեան վրայ նոր ու յիշատակելի էջ մը ևս աւելցաւ, Երուսաղէմ այցելութեամբը Ռումէն Եկեղեցիի պետ Նորին Ամենապատուութիւն Ժուստինիան Պատրիարքի, որ քաղաքս մնաց 21 Մայիսէն մինչև 30 Մայիս:

Սրբազան Պատրիարքը Պեն-Կուրիօն օղակայան ժամանեց Զորեքարթի, 21 Մայիս 1975, կէսօրէ ետք: Ան իր չքախումբին և հիւրընկալ Յունաց Պատրիարքարանի Միաբանութեան անդամներուն ուղեկցութեամբ Երուսաղէմ ժամանեց երեկոյեան և Յոսպէի դրան մուտքին ընդունուեցաւ պետական, հիւպատոսական և կրօնական ներկայացուցիչներու կողմէ:

Ս. Աթոռիս կողմէ ներկայ էին հիւրաբար Երուսաղէմ գտնուող Աւստրալիոյ Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Գարեգին Եպս. Գազանճեան և Աւագ Թարգման Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

Շարաթ, 24 Մայիս, կէսօրին, Ն. Ամեն. Ժուստինիան Ռումանիոյ Պատրիարքը իր չքախումբի անդամներով պաշտօնական այցելութիւն մը տուաւ Պատրիարք Ս. Հօր:

Միաբանութեան հոգեւորհ հայրերն ու ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի սաները Վանքի մուտքին դիմաւորեցին Ամենապատու հիւրը և «Օրհնեցէք զՏէր» շարականի երգեցողութեամբ առաջնորդեցին Պատրիարքարան, սանդղաններուն վրայ ընդունուելով Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս Աճէմեանի կողմէ:

Պատրիարքարանի մուտքին Ն. Ամեն. Ժուստինիան ջերմօրէն ընդունուեցաւ Պատրիարք Ս. Հօր կողմէ: Ապա, լուսադարձ Դահլիճին մէջ կատարուած ընդունելութեան միջոցին բարի դալուստի խօսք տոնելով, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը անդրադարձաւ Հայ և Ռումէն դարաւոր Եկեղեցիներու փոխ-

յարարերութեան, և բարձր գնահատեց Ն. Ամեն. Ժուստինիան Պատրիարքի դերը՝ Ռուսիայի Եկեղեցիի պայծառութեան և կազմակերպումին համար:

Իր պատասխանին մէջ, Ն. Ամեն. Ժուստինիան Պատրիարք շնորհակալութիւն յայտնեց ջերմ ընդունելութեան և Ռուսիայի Եկեղեցիին նկատմամբ արտայայտուած գեղեցիկ խօսքերուն համար: Ան անդրադարձաւ Հայ Ժողովուրդի անցեալին, և յիշեց թէ ինչպէ՛ս Ռուսիայի Ժողովուրդը Մեծ Եղեռնէն առաջ ու ետք սիրով ընդունած է Հայերը և անոնց ընծայած ամէն ազատութիւն ու ասպնջականութիւն:



Ս. Գլխադրի մէջ իր ազօր քէն հոգ,
Ն. Ամեն. Ժուստինիան Պատրիարք կ'օրհնէ ներկաները:

Ապա, հիւրատիրութենէ և մտերմիկ խօսակցութենէ մը ետք, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը բնկերացաւ Ն. Ամեն. Ժուստինիան Պատրիարքին մինչև Վանքի աւազ դուռը, ուր երկու Ամենապատիւ Սրբազանները ողջագուրուեցան և հրաժեշտ առին իրարմէ :

Կիրակի, 25 Մայիս, Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հայրը և Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս ներկայ եղան Ինթըրֆոնէիմբըլ պանդոկին մէջ Յունաց Պատրիարք Ն. Ամեն. Պենետիքթոսի կողմէ ի պատիւ Սրբազան հիւրին տրուած ճաշկերոյթին :

Իսկ Երեքշաբթի, 27 Մայիս, Երեկոյան ժամը 6-8, Կրօնից Նախարար Ն. Վսեմ. Իցհաք Ռաֆայէլի կողմէ Երուսաղէմի Թատրոնին մէջ ի պատիւ Ն. Ամեն. Ժուստինիան Պատրիարքին տրուած ընդունելութեան Ս. Աթոռիս կողմէ ներկայ եղան Հոգշ. Տ. Կիւրեղ Մ. Վրդ. Գարիկեան, Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան և Պրն. Գ. Հինդլեան :

Ն. Ամեն. Ժուստինիանի Երուսաղէմ այցելութեան զլիաւոր նպատակներէն մին էր օծել Ս. Քաղաքիս նորակառոյց Ռումէն զեղեցիկ Եկեղեցին : Տրապաւորիչ այդ արարողութիւնը կատարուեցաւ Չորեքշաբթի, 28 Մայիս, կէսօրէ առաջ, Ս. Պատարագի ընթացքին, ի ներկայութեան պետական և կրօնական ներկայացուցիչներու և հաւատացեալներու : Ս. Աթոռիս կողմէ ներկայ էին Հոգշ. Տ. Կիւրեղ Մ. Վրդ. Գարիկեան և Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան :



Ս. Աթոռիս Ամեն. Գահակալը Սրբազան Հիւրին կը նուիրէ Ռումէն քանկագին Աւետարան մը պարունակող սատափեայ տուփը :

* * *

Հինգշաբթի, 29 Մայիս, երեկոյան, Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հայրը շքեղ ընդունելութեամբ մը պատուեց Ռուսիոյ Եկեղեցիի պատ Ամենապատիւ Տ. Ժուստինիան Պատրիարքը:

Երեկոյան ժամը Նին Ամենապատիւ Հիւրը իր Հետեւորդներով և Յոյն Պատրիարքարանի ներկայացուցիչ եպիսկոպոսներով Ս. Յակոբեանց Վանքի աւագ դրան առջև դիմաւորուեցաւ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոսի, միաբան հայրերու, ժառանգաւոր սաներու և հաւատացեալներու կողմէ և «Հրաշափառ»ով առաջնորդուեցաւ Տաճար, որուն մուտքէն բնդունուեցաւ Ամեն. Պատրիարք Ս. Հօր կողմէ: Ս. Գլխադիրի սրբաւայրին մէջ իր աղօթքը ընելէ ետք, Ամեն. Հիւրը թափօրով և շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան, ուր հրաւիրուած էին նաև կրօնական համայնքներու և պետական ու հայ համայնքի ներկայացուցիչները: Ներկաներուն մէջ էին Կրօնից Նախարար Ն. Վսեմ. Պրն. Իցհաք Ռաֆայէլ, Երուսաղէմի Նահանգային Կառավարիչ Ն. Վսեմ. Պրն. Ռաֆայէլ Լէվի, Երուսաղէմի Ոստիկանապետ Հայնց Պրայթըն-Փելտ, Կրօնից Նախարարութեան քրիստոնեայ համայնքներու Գործերու Գրասենեակի վարիչ Պրն. Ռէօֆէն Քական, ինչպէս նաև Հիւպատոսական լրիւ կազմը:

Պատրիարքարանի լուսադարձ շքեղ դահլիճին կեդրոնը պատրաստուած էր պատուոյ ճոխ սեղան մը, որ ներկաներուն հիացումին առարկան դարձաւ:

Ընդունելութեան միջոցին մեծ խանդավառութիւն ստեղծեց ժամանումը Երուսաղէմի Յոյն Պատրիարք Ն. Ամեն. Պենետիքթոսի, որ հակառակ իր աւելոր տարիքին և տկար առողջութեան՝ փափաքեր էր պատուել Ռուսիոյ Եկեղեցւոյ Ամեն. Պետն ու Հայ Պատրիարքութիւնը:

Պատուասիրութեան կէսին, խօսք առաւ Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հայրը և անգլերէն ուղերձով մը վերստին բարի գալուստ մաղթեց Ն. Ամեն. Ժուստինիան Պատրիարքին, և կրկին անգամ շեշտեց Հայ և Ռուսիոյ Եկեղեցիներու սիրտ յարարեցութիւնն ու անոնց միջև գոյութիւն ունեցող եղբայրական ջերմ սէրը: Պատրիարք Ս. Հօր խօսքերը տեղւոյն վրայ ուսմաներէնի թարգմանուեցան: Ն. Ամեն. Ժուստինիան Պատրիարքին նոյնքան սիրալիւր արտայայտութիւններէն ետք, երկու Սրբազան Պատրիարքները նուէրներ փոխանակեցին: Ն. Ամեն. Տ. Եղիշէ Պատրիարք Սրբազան Հիւրին ընծայեց սատարեալ Հիանալի տուփ մը որուն մէջ կը գտնուէր Ռուսիաներէն լեզուով Աւետարան մը. տուփին կափարիչին մեծ ճարտարութեամբ և հարազատութեամբ փորագրուած էր Ռուսիոյ Ամեն. Պատրիարքին դիմաքանդակը: Ռուսիոյ Պատրիարքի շքախումբի անդամներուն ընծայուեցան ձեռաց խաչեր և Երուսաղէմ ներկայացնող սատարեալ պատկերներ: Իսկ Ամեն. Հիւրը Ս. Յակոբեանց Տաճարին համար նուիրեց թանկագին կանթեղ մը, իսկ Ն. Ամենապատուութեան և Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոսին՝ ձեռաց խաչեր և պանակէներ, ինչպէս նաև Երուսաղէմ իր այցելութեան առթիւ պատրաստուած մետաղներ:

Ժամը 7.30ին Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հայրը և միաբան հայրերն ու ներկաները ողջերթ մաղթեցին Ժուստինիան Պատրիարքի, որուն ընկերացան մինչև Վանքի աւագ մուտքը: Սրբազան Հիւրը կրկին անգամ իր ուրախութիւնն

ու. զոհունակութիւնը յայտնելէ ետք Ս. Աթոռիս զահակալին՝ ընծայուած հիւանալի ընդունելութեան համար, հրաժեշտ առաւ բոլորէն և իր շքախումբի անգամներով վերադարձաւ իր հանգստավայրը:

Ն. Ամեն. Պենետիքթոս Պատրիարք ժամանակ մը ևս մնաց Պատրիարքարան, ուր Ն. Ամենապատուութեան, միարան հայրերուն և ներկաներուն հետ հաճելի ու մտերմիկ զրոյց ունեցաւ:

Ան հրաժեշտ առաւ ժամը 8-30ին, և Վանքի աւագ դրան մէջ կրկին անգամ Պատրիարք Ս. Հօր հետ ողջագործուելէ ետք, բարձր և զոհ տրամադրութեամբ մեկնեցաւ՝ իր միարանութեան անդամներուն ընկերակցութեամբ:

* * *

Ուրբաթ, 30 Մայիս, առաւօտեան, Պատրիարքարանիս կողմէ Ռումէն եկեղեցւոյ պետ Ն. Ամեն. Ժուստինիան Պատրիարքին ողջերթ մաղթելու համար Լիւի օգակայան կը դտնուէր Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս, որ բարի երթի անկեղծ և քերթ խօսքերով հանդէս եկաւ: